



**Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ  
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ  
ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ  
ИМЕНИ В. БРЮСОВА  
BRUSOV STATE UNIVERSITY**

**ԲԱՆԲԵՐ  
Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ  
ВЕСТНИК ГОСУДАРСТВЕННОГО УНИВЕРСИТЕТА ИМЕНИ  
В. БРЮСОВА  
BULLETIN OF BRUSOV STATE UNIVERSITY**

---

**ԼԵՉՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ**

**ЛИНГВИСТИКА И ФИЛОЛОГИЯ**

**LINGUISTICS AND PHILOLOGY**

**1(56)**

**Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ  
«ԼԻՆԳՎԱ» ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ**

**ԵՐԵՎԱՆ - 2021**

**ՖՐԱՆՍԵՐԵՆԻ ՕՈՒԱՆՈՐՈՇ - ԱՆՁՆԱԿԱՆ ԴԵՐԱՆՎԱՆ ՀԱՅԵՐԵՆ  
ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

**ԱՐԱՄ ԲԱՐԼԵՁԻՉՅԱՆ**

*Հիմնաբառեր՝ ձևաբանություն, դերանուններ, հակադրական  
լեզվաբանություն, թարգմանություն, բազմիմաստություն,  
տեքստայնություն, ռեհիմաստային արժեք*

Հոդվածում քննության է առնվում ֆրանսերենի ամենաինքնատիպ դերանուններից մեկի՝ Օո-ի գործածության և հայերեն թարգմանության հնարավոր տարբերակների հարցը: Լեզվաբանական գրականության մեջ Օո-ը դասվում է մերթ անորոշ, մերթ անձնական դերանունների շարքին: Մի դեպքում ելակետը նրա իմաստային անորոշությունն է, մյուս դեպքում նրա գործածությունը բոլոր դեմքերի ենթակա անձնական դերանունների փոխարեն՝ եզակի թե հոգնակի: Այս պատճառով է, որ լեզվաբաններից շատերն այն անվանում են «քամելտոն» դերանուն:

Այսպիսով, կարող ենք փաստել, որ Օո դերանունը իմաստային ներհակություն է ամփոփում իր մեջ. մի կողմից նշում է ընդհանրապես մարդկանց բազմություն, մյուս կողմից՝ առանձին անհատ: Հակադրական (կոնտրաստիվ) մեթոդի կիրառության դեպքում բացահայտվում է Օո-ի կիրառության բացառիկ ճկունությունը, որը, լեզվաբանների կարծիքով, նմանը չունի եվրոպական մյուս լեզուներում:

Օո-ը ձևաբանորեն տարբերակված չէ, այն չեզոքանում է անձնական դերանունների համակարգում, դեմքի և թվի որոշակիություն չունի, իսկ բայը դրվում է երրորդ դեմքի եզակի թվով:

Ուստի, միայն համատեքստն է օգնում զանազանելու նրա գործառական իմաստները և հուշում նրա թարգմանությունը: Օո-ի գործածության այս կամ այն դեպքը ճշտելու և ռեհիմաստային առումով գնահատելու համար հաճախ անհրաժեշտ է լինում դիմել նույնիսկ ծավալուն համատեքստի, երբ ի հայտ են գալիս հաղորդակցության մյուս հատվածների հետ Օո-ի փոխկապակցվածությունը և այդ հատվածների բովանդակային մանրամասները: Այս տեսանկյունից Օո-ը կարող է դիտվել բազմիմաստ դերանուն:

Օո-ը ծագում է լատիներեն homo-ից (մարդ) և այդ պատճառով է իր մեջ ամփոփում «ցանկացած ոք», «յուրաքանչյուրը», «մարդ, մարդիկ» իմաստները, պայմանով, որ դրանք անորոշ ու ընդհանրական լինեն:

Հենց այդ անորոշությամբ է պայմանավորված Օո-ի ներկայությունը խրատախոսքերում ու առածներում.

- On apprend à tout âge - Քանի ապրես, պիտի սովորես
- On ne badine pas avec l'amour - Սիրո հետ կատակ չեն անի
- On ne peut fuir sa destinée - Ճակատագրից չես փախչի
- On récolte ce qu'on a semé - Ինչ ցանես՝ էն կհնձես
- On reconnaît l'arbre à ses fruits - Ծառն իր պտղից կճանաչվի
- On ne meurt qu'une fois - Մարդը մեկ անգամ է մեռնում, և այլն:

Օո-ը խոսքում միշտ ենթակա է: Եվ քանի որ ժամանակակից ֆրանսերենը հակում ունի ազատվելու բայական վերջավորություններից, Օո-ը, ըստ Ժան Դյուբուայի՝ «չեզոքացնում է դիմային համակարգը, որովհետև ոչ դեմքի, ոչ էլ սեռի որևէ ցուցիչ չունի և թելադրում է բայի գործածություն բացառապես եզակի երրորդ դեմքով» (Dubois 1965: 111), մի երևույթ, որ մեծապես պայմանավորված է նաև թե՛ բանավոր, թե՛ գրավոր խոսքում տնտեսման և նվազագույն ճիգ գործադրելու միմյանց փոխլրացնող միտումներով: Օո-ի գործածությունը առավելապես բնորոշ է խոսակցական ֆրանսերենին, ուր նա խոսքին հաղորդում է անմիջականություն ու մտերմիկ երանգ:

Այսպիսով, լեզվաբանի և հատկապես թարգմանչի համար Օո-ը ուսումնասիրության գրավիչ մի ասպարեզ է, մանավանդ այն առումով, որ ֆրանսախոսներն իրենց առօրյա լեզվախոսության ընթացքում որևէ նեղություն չեն կրում Օո-ը գործածելիս:

Այժմ անդրադառնանք այն կարևոր հարցին, թե Օո-ի հայերեն թարգմանության ինչ տարբերակներ կարող են լինել:

Օրինակները քաղված են ֆրանսիացի ժամանակակից հեղինակ Լեո Մալլեի (Léo Mallet) *Les enquêtes de Nestor Burna et les nouveaux mystères de Paris* (Նեստոր Բյուրնայի հետաքննություններն ու Փարիզի նոր առեղծվածները) խուզարկուավետից, որի լեզուն մեր օրերի կենդանի խոսակցական ֆրանսերենն է: Վեպը հրատարակվել է 1985-ին և ունեցել է վեց վերահրատարակություն՝ 1986, 1987, 1988, 1989, 1991 և 1995 թվականներին:

Ինչպես արդեն նշել ենք վերևում, Օո-ը կարող է փոխարինել ենթակա անձնական դերանունների բոլոր դեմքերին, ուստի և թարգմանվել հայերենի համապատասխան դերանուններով ու դիմավոր բայաձևերով: Եվ այսպես.

### **1. Եզակի I դեմք**

- Gabi n'est pas là ? demandai - je?
- Gabi, c'est moi, dit la fille, d'une voix fatiguée.
- Gabi la blonde, précisai - je.

- Plus depuis six mois, mon chou. J'ai changé la couleur de mes tifs...
- On peut voir ta frimousse? J'ai à parler à Gabi la blonde. Je ne veux pas me gourer. ( p. 424)
- Գարին այստեղ չէ՞, - հարցրեցի ես:
- Գարին ես եմ, - ասաց աղջիկը հոգնած ձայնով:
- Շիկահեր Գարին, - ճշտեցի ես:
- Վեց ամիս է, ինչ նա շիկահեր չէ, հոգյակս: Ես փոխել եմ մազերիս գույնը:
- Կարո՞ղ եմ մոռաթիկդ տեսնել: Ես շիկահեր Գարիի հետ պետք է խոսեմ: Չեմ ուզում սխալված լինել:

## **2. Եզակի II դեմք**

Je lui posai la main sur l'épaule. Il se retourna, laissant échapper une exclamation. Avant qu'il fût revenu de sa surprise, je lui dis, d'un air entendu:

- Et alors, on ne reconnaît plus ce vieux Pierre (p. 19-20)

Ձեռքս դրեցի նրա ուսին: Նա շրջվեց ու մի բացականչություն արձակեց: Ու մինչ կսթափվեր զարմանքից, գործին տեղյակ մարդու տեսքով հարցրեցի.

- Ինչ է, արդեն մոռացել ես վաղեմի բարեկամ Պիեռին:

## **3. Եզակի III դեմք**

- Hé! Hé! Sait-on jamais? sourit-il. Dans une ville à spirites, théosophes et autres marchands de calembredaines comme Lyon, l'intervention d'un fantôme serait-elle si extraordinaire? (p.27)

- Է՛ է՛, ո՞վ իմանա, - ժպտաց նա: - Ոգեհմաների, աստվածիմացների ու զավեշտաբան առևտրականների քաղաքում, ինչպիսին Լիոնն է, որևէ ուրվականի հայտնվելը մի՞թե այդքան տարօրինակ պիտի համարվի:

## **4. Հոգնակի I դեմք**

- Votre collaborateur était diablement secret. Nous n'avons pas découvert grand-chose sur son compte. Quant au pilleur de banques, Villebrun, il est sorti de Nîmes à peu près à la date que vous avez indiquée, mais on a perdu sa trace (p. 23 )

- Ձեր աշխատակիցը չափազանց առեղծվածային է: Մենք նրա վերաբերյալ շատ բան չենք բացահայտել: Ինչ վերաբերում է Վիլբրենին, բանկեր թալանողին, ապա նա Նիմից մեկնել է մոտավորապես ձեր նշած օրը, բայց մենք կորցրել ենք նրա հետքը:

## **5. Հոգնակի II դեմք**

Au demeurant, c'était un bon bougre, serviable et paternel, si l'on veut. (p. 67)

Ի վերջո, դա մի բարի մարդ էր, ծառայական ու հայրաբարո, եթե կուզեք:

## 6. Հոգնակի III դեմք

Il leva un doigt à l'extrémité jaunie par le tabac :

- ... c'est le voleur. Il avait sur lui le vrai tableau et la copie et on lui a fauché son argent et le vrai tableau. (p. 445).

Նա բարձրացրեց ծխախոտից դեղնած մատը.

- ... դա գողն է : Նրա մոտ եղել է նկարի բնօրինակն ու կրկնօրինակը, ու նրանից գողացել են ունեցած դրամն ու բնօրինակը :

Նշենք, որ վերոհիշյալ դեպքերից ամենից ավելի տարածված են հոգնակի առաջին և երրորդ դեմքերի դերանուններին փոխարինող կիրառությունները:

Առանձնակի հետքորոշություն է ներկայացնում *on* + *avoir* l'impression, *on* + *avoir* la preuve, *on* + *dire*, *on* + *parler*, *on* + *pouvoir*, *on* + *savoir*, *on* + *sentir*, *on* + *trouver*, *on* + *voir* ու բազմաթիվ նմանատիպ կառուցների թարգմանությունը, երբ բայը հայերենում կրավորաձև է, երբ ենթակայի պաշտոնում մարդ գոյականն է, երբ թարգմանությունը կատարվում է տարբեր խոսքի մասերի պատկանող բառամիավորներով կազմած անդամ դարձվածների օգնությամբ, և այլն : Բերենք օրինակներ.

- **On + avoir l'impression**

On avait l'impression, au bout d'un quart d'heure de conversation avec elle, que tant qu'elle vivrait les psychiatres ne seraient pas réduits au chômage . (p. 239)

Քառորդ ժամ նրա հետ զրուցելուց հետո տպավորություն էր ստեղծվում, թե քանի դեռ նա ողջ է, հոգեբույժները գործազրկության չէին մատնվի :

- **On + avoir la preuve**

Mais Thévenon a-t-il vraiment emporté les lingots? On n'en a jamais eu la preuve. (p. 167)

Բայց իրո՞ք Թենոնն է տարել ոսկու ձուլակտորները: Դա երբեք չապացուցվեց:

- **On + dire**

- Entendu. La captivité vous a transformé, on dirait. Vous me paraissez bien bavard. (p. 66)

- Պայմանավորվեցինք : Բանտարկված լինելը, կարծես Ձեզ փոխել է: Դուք չափից ավելի շատախոս եք դարձել:

- **On + s'embêter**

- Entrer par effraction dans le logement d'un assassin décédé et fouiller dudit. Avec vous, on ne s'embête pas. (p. 49)

- Կոտրանքով մտնել մահացած մարդասպանի տունն ու խուզարկել նրան: Ձեզ հետ մարդ չի ձանձրանա:

- **On + parler**

Dans le corps de l'article, on parlait d'une jeune femme brune. (p. 181)

Հողվածում խոսվում էր երիտասարդ, թխահեր կնոջ մասին:

- **On + pouvoir**

Ne pouvait-on retarder mon départ ? J'avais pas mal de choses à faire. (p. 62)

Հնարավոր չէր արդյո՞ք հետաձգել իմ մեկնումը: Ես շատ անելիքներ ունեի:

- **On + savoir**

On n'a jamais su où Thévenon s'était cache après l'attentat du Havre. (p. 214)

Երբեք չիմացվեց, թե որտեղ էր Թևենոնը թաքնվել Հավրում տեղի ունեցած մահափորձից հետո:

- **On + sentir**

On la sentait heureuse, soulagée de pouvoir enfin répondre franchement. (p. 188)

Զգացվում էր, որ նա երջանիկ է, սփռփված, որ վերջապես կարողացել է անկեղծորեն պատասխանել:

- **On + trouver**

- On trouve vraiment de tout, aux Halles, observai-je. Quel nom avez-vous dit?

- Larpent, Etienne Larpent ... Cela vous rappelle quelque chose, maintenant? (p. 432)

- Կենտրոնական շուկայում իսկապես ում ասես կարելի է հանդիպել. - նկատեցի ես : - Ի՞նչ անուն ասացիր:

- Լարպան : Էթյեն Լարպան ... Սա Ձեզ որևէ բան հիշեցնու՞մ է:

- **On + voir**

On n'y voyait pas à deux pas. Précipiter quelqu'un dans le Rhône eût été un jeu.

Այնտեղ երկու մետրի վրա ոչինչ չէր երևում: Ինչ-որ մեկին Ռոնը գլորելը խաղի պես մի բան պիտի լիներ:

Երբեմն մեկ պարբերության մեջ արձանագրվում են On – ի գործածության մեկից ավելի դեպքեր, ինչը որոշակի ոճիմաստային երանգ է հաղորդում տեքստին:

- On se rend à l'invitation d'un maître-chanteur pour payer ou lui casser la gueule ... Pas les deux à la fois.

- Losqu'on est nerveux comme cette femme, on ne possède pas votre logique.

On casque et on s'arme tout de même, en vue d'on ne sait quelle éventualité. (p. 210)

- Դրամաշորթի կանչով նրա մոտ գնում են վճարելու կամ մոռոթը ջարդելու ... Բայց ոչ երկուսը միաժամանակ:

- Երբ մարդ այդ կնոջ պես նյարդային է լինում, նա ձեր տրամաբանությամբ չի առաջնորդվում: Վճարում է, բայց նաև գինվում է, աչքի առաջ ունենալով ցանկացած անակնկալ:

Քիչ չեն նաև դեպքերը, երբ համատեքստը թարգմանչին ընտրության հնարավորություն է ընձեռում՝ ըստ ճաշակի ու հայեցողության : Այսպես .

Il y avait un flic sur le bord du trottoir. Il était de service ou attendait une bonniche, on n'aurait su dire. (p. 126)

Մայթեզրին մի ոստիկան կար : Ծառայության մեջ էր, թե ինչ-որ աղախնու էր սպասում, դժվար էր կռահել (չէիր կարող գուշակել):

- Nous parlerons de Stalag.

- Oh!, alors ... On le saura que vous avez été prisonnier ... (p. 101)

- Մենք կխոսենք համակենտրոնացման ճամբարի մասին:

- Օ՛հ, այդ դեպքում կիմացվի (կիմանան), որ գերի եք եղել:

Օրինակները կարելի է անվերջ շարունակել, սակայն եղածն էլ բավական է համոզվելու համար, թե որքան բազմազան ու տարատեսակ են Օո – ի հայերեն թարգմանության տարբերակները:

Ուսումնասիրված փաստական նյութը հիմք է տալիս պնդելու, որ Օո դերանունն օժտված է իմաստային ներունակ բազմադիմությունը, հստակ համատեքստային բազմիմաստությունը, որի շնորհիվ որևէ չափով չի խոչընդոտվում ասույթի բովանդակության ընկալումը:

Ուստի մնում է եզրակացնել, որ ֆրանսերենի Օո անորոշ-անձնական դերանվան դիտարկումը պետք է ընթանա հետևյալ ուղղություններով՝ **բազմիմաստություն և տեքստայնություն:**

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Basmanova A., Tarassova A. Syntaxe de la phrase française, Moscou, 1986.
2. Dubois J. Grammaire structural du français : nom et pronom, Larousse, 1965.
3. Fournier N. Grammaire de français classique, Paris, 2002.
4. Grammaire Larousse du 20 ème siècle, Librairie Larousse, Paris, 2006.
5. Grevisse M., Goosse A. Le bon usage, Paris, 2011.
6. Rabat A. La valeur de «on» pronom indéfini / pronom personnel dans les perceptions représentées. L'information grammaticale, Paris, 2001.
7. Гак В. Теоретическая грамматика французского языка. Синтаксис, Москва, 1986.
8. Гак В., Григорьев Б. Теория и практика перевода, 3-е издание, Москва, 2000.

